ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԱՐԱՄ ԱՆԱՆՅԱՆ

Ցավոք ժողովուրդներն իրենց հարևաններին չեն ընտրում: Ճակատագրի բերումով Հայաստանի հարևաններից մեկը Թուրքիան է: Հայաստանը և Թուրքիան չունեն դիվանագիտական հարաբերություններ՝ այդ իսկ պատճառով երկխոսության հարցը պարբերաբար դառնում է քաղաքական տարաբնույթ քննարկումների և շահարկման առարկա: Այս իրողությունը պատահական չէ. քանզի երկկողմ հարաբերությունները ցայսօր մնացել են չկարգավորված, իսկ դրանք պայմանավորող հարցերի շրջանակը բավական ընդգրկուն է ու բազմաշերտ: Երկու հարևան պետությունների միջև բնականոն հարաբերությունների հաստատմանը խոչընդոտում են ոչ միայն պատմական անցյալի իրողությունները՝ 1915-1923թթ. Օսմանյան կայսրության կողմից կազմակերպված և իրականացված Հայոց ցեղասպանությունը, այլև տարածաշրջանում արդի աշխարհաքաղաքական իրողությունները: Փաստորեն՝ Անկարան Արցախի խնդրի լուծումը տեսնում է պատմականորեն հայկական երկրամասն Արդբեջանի կազմում թողնելու մեջ:

Փաստ է, որ չնայած հարաբերությունները զարգացնելու հնարավորություններին Հայաստանի և Թուրքիայի առնչությունները մեռյալ կետից քիչ են առաջ գնացել՝ Երևանի և Անկարայի միջև անգամ չեն հաստատվել դիվանագիտական հարաբերություններ: Թուրքիան Ադրբեջանի հետ փաստորեն շրջափակել է Հայաստանը, ինչպես նշեցինք, մերժելով արցախահայության ինքնորոշման իրավունքի ճանաչումը: Պաշտոնական Անկարան բազմիցս հայտարարել է Երևանի հետ երկխոսության սկսելու իր նախապայմանները: Վերջինս, սակայն, պնդում է առանց նախապայմանների հարաբերությունների կառուցման անհրաժեշտությունը: Հարկ ենք համարում նշել նաև, որ Անկարայի և Երևանի պաշտոնական ներկայացուցիչները բազմիցս հանդիպել են երկկողմ և բազմակողմ ձևաչափերով: Այդ հանդիպումների և նմանօրինակ միջազգային ֆորումների քննարկման առարկան եղել են երկկողմ հարաբերությունների բազում հիմնախնդիրները: Սակայն ի վերջո թուրքական կողմի ապակառուցողական դիրքորոշումը դատապարտել է բոլոր այդ նախաձեռնությունները ձախողման: Անկարայի նմանօրինակ քաղաքականությունն աշխարհաքաղաքական հստակ հաշվարկի արդ-

ՀՈԴՎԱԾ-ՆԵՐ

յունք է: Մեր կարծիքով հայ-թուրքական հարաբերությունները նաև կովկասյան աշխարհաքաղաքական այսբերգի երևացող գագաթներից միայն մեկն է: Չէ որ այս տարածաշրջանում են խաչվում միջազգային հարաբերությունների հիմնական դերակատարների՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Եվրամիության և այլոց շահերը: Այս իրողությունների պայմաններում հայ-թուրքական հարաբերությունների խնդիրն իր վրա է բևեռում համաշխարհային հանրության ուշադրությունը:

Պաշտոնական հարաբերությունների բացակայության պայմաններում այդ դաշտում են փորձել աշխատել հասարակական դիվանագիտության ներկայացուցիչները, որոնք առաջ են քաշել նաև հասարակական երկխոսության անհրաժեշտության հարցը: Իհարկե, հասարակական դիվանագիտությունը միշտ չէ, որ եղել է ինքնաբուխ: Ցայսօր այս ոլորտում էլ առաջընթացը չնչին է: Հուսադրող է, թերևս, այն իրողությունը, որ երկխոսության անհրաժեշտությունը գիտակցվում է ոչ միայն Հայաստանում այլև սահմանից անդին: Չէ որ բազմիցս արծարծվել է հասարակական երկխոսության միջոցով փոխադարձ անհանդուրժողականության մթնոլորտն արմատախիլ անելու կամ «պատմությունը պատմաբաններին թողնելու» անհրաժեշտության մասին: Եղել են նաև պատմաբանների երկխոսության փորձեր: Վերջին հաշվով հարկ է փորձել պատասխան տալ մի շարք հարցերի. ի՞նչ ենք մենք ուզում երկխոսությունից և Թուրքիայից. ինչպիսի՞ն պիտի լինի երկխոսությունը, ի՞նչ հարցեր պիտի քննարկի այն: Վերջապես՝ հնարավո՞ր է արդյոք հայ-թուրքական երկխոսությունը: Կարող է բնական հարց ծագել, թե ի՞նչ երկխոսության մասին է խոսքը, եթե պետական և հասարակական կառույցների մակարդակով ազգամիջյան շփումները բազմիցս տապալվել են: Այդ դեպքում ու՞մ հետ պիտի սկսել երկխոսությունը:

Կարծում ենք, թուրքական հասարակության մեջ ձևավորվել է մի շերտ, որոնց հետ երկխոսությունը հնարավոր է: Դա նոր սերնդի թուրք պատմաբաններն ու գիտնականներն են, որոնց տեսակետներն այլ են, քան Թուրքիայի պաշտոնական պատմագրության հայացքները, դրանք արտասահմանում գործող թուրքական հասարակական կազմակերպություններն են, ինչպես նաև Թուրքիայում և նրա սահմաններից դուրս բնակվող հեղինակավոր իրավապաշտպանները: Վերջիններս հակված են այն կարծիքին, որ ճանաչելով և դատապարտելով Հայոց ցեղասպանությունը Թուրքիան կմաքրի իր վրայից հանցագործի խարանը: Թուրքական հասարակության այս շերտն է, որ կարող է լինել այդքան անհրաժեշտ երկխոսության մյուս կողմը:

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Այսօր հայ-թուրքական հարաբերությունները պայմանավորող կարևորագույն գործոնը բնականորեն հանդիսանում է պատմությունը: Ինչպես հայտնի է՝ քսաներորդ դարի սկզբին, օգտվելով համաշխարհային պատերազմի թոհուբոհից, Թուրքիան աննախադեպ դաժան մեթոդով փորձեց լուծել Հայկական հարցը: Օսմանյան կայսրությունը Թուրքիային փոխանցեց Հայոց ցեղասպանության ծանր ժառանգությունը, որը կոծկելու համար արդեն հանրապետական Թուրքիան չի խնայում ոչ ջանք ու ոչ էլ

ֆինանսական միջոցներ:[1] 1990-ականների սկզբին, անկախության սկզբնական շրջանում Հայաստանը, փորձելով արևմտյան հարևանի հետ երկխոսության եզրեր գտնել, Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը չընդգրկեց իր արտաքին քաղաքական առաջնայնությունների շարքում, չնայած այն իրողությանը, որ Մեծ եղեռնի միջազգային ճանաչման անհրաժեշտությունը ամրագրվել էր դեռևս 1990թ. օգոստոսի 23-ին ընդունված Անկախության հռչակագրում. պաշտոնական Երևանը հանդես եկավ հարևան պետությունների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատման կարևորությունը ապացուցող և հաշտեցման կոչ անող հայտարարություններով:[2] Հայոց համազգային շարժման առաջնորդները անհիմն և կործանարար էին համարում այն տեսակետը, որ Հայաստանը, շրջապատված լինելով իր նկատմամբ թշնամական տրամադրվածություն ունեցող երկրներով, կարող է գոյություն ունենալ միայն հզոր պետություններից մեկի աջակցությամբ: Արդեն 1990թ. նոյեմբերին, ՀՀՇ երկրորդ համագումարում կուսակցության առաջնորդ Լ. Տեր-Պետրոսյանը հայտարարեց. «Վերջին տարիներին քաղաքական մտքի մեջ տեղի ունեցած ամենամեծ հեղափոխությունը հրաժարումն է օտարներին ապավինելու, երրորդ պետության հովանավորության վրա հույս դնելու սնանկ գաղափարից...: Փնտրենք և ստեղծենք մեր ազգի գոյության նոր, ավելի հուսալի երաշխիքներ: Ահա այս երաշխիքների օղակներից մեկն է միայն Հայաստանի և Թուրքիայի հարաբերությունների կարգավորումը»:[3] Լինելով խորհրդային հսկայածավալ կայսրության հոգեվարքի ականատեսն ու լուռ վկան՝ Թուրքիան 90-ական թթ. վերահիմնադրվում էր տարածաշրջանային իր գերակայությունները:[4] Եթե սկզբում թուրքական կողմը, անգամ պաշտոնական մակարդակով, մտավախություն էր հնչեցնում ԽՍՀՄ քայքայման մասին (մասնավորապես արտգործնախարար Մեսութ Յըլմազը հայտարարում էր. «Ասված մի արասցե, որ Խորհրդային միությունը քայքայվի: Մեզ համար նախընտրելի է Թուրքիայի հարևանությամբ ունենալ գերհզոր պետություն քաղաքական կայուն կարգավիճակով, քան անկախ բայց անկայուն մի քանի հանրապետություններ»[5]), ապա շուտով թուրքերը կողմնորոշվեցին և անգամ սկսեցին հայտարարել, որ 21-րդ դարը լինելու է թուրքական աշխարհի դար: Թուրքիան փորձում էր օգտագործել իր պատմական, էթնիկական և լեզվական ընդհանրությունները Ադրբեջանի և Կենտրոնական Ասիայի թրքախոս երկրների վրա վերահսկողություն հաստատելու համար՝ ցանկանալով դառնալ թյուրքական աշխարհի կենտրոնը:[6] Այս փոփոխությունը պատահական չէր: Մինչև «երկաթյա վարագույրի» անկումը Թուրքիան համարվում էր Արևմուտքի և Հյուսիս-Ատլանտյան դաշինքի առաջապահը ԽՍՀՄ-ի դեմ պայքարում: Վարշավյան անվտանգության համակարգի քայքայումը սպառնում էր թուրքերին զրկել Արևմուտքի համար գրավչությունից: Այս պարագայում համաթուրքական աղաբեյի՝ ավագ եղբոր կարգավիճակը Անկարայի միակ խաղաքարտն էր: Շուտով, իհարկե, այս ծրագիրը տապալվեց, և համաթուրքականությունը կրկին զիջեց իր դիրքերը Անկարայի արտաքին քաղաքական օրակարգում:

Այս ամենի լույսի ներքո հայաստանյան նոր քաղաքական էլիտայի անկախական տրամադրություններն Անկարայում լռելյայն ըմբռնում էին գտնում:

Դեռևս 1990թ. հայտնի թուրք հրապարակախոս Իլիան Սելչուքը «Ջումհուրիյեթ» թերթի էջերում գրում է. «Եղբայրական Ադրբեջանի անկա-

իսացումը սքանչելի մի նպատակ է: Սակայն այդպիսի նպատակադրումն ինքնին ենթադրում է անկախության ճանապարհին քաջալերել նաև Հայաստանին: Վերջինիս անկախացման պարագայում Թուրքիան անխուսափելիորեն հայտնվելու է «Հունաստան-Հայաստան» աքցանի մեջ: Մինչդեռ այդ երկու երկրները պահանջատիրական հավակնություններ ունեն Անատոլիայի նկատմամբ»:[7] Մեկ այլ թուրքական թերթ՝ «Միլլիեթը» 1990թ. դեկտեմբերի 5-ին վկայում է, որ չնայած վերոնշվածին, Անկարան ջերմ մոտեցում է ցուցաբերում Հայաստանի նկատմամբ:[8] Այնուամենայնիվ, Հայաստանի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը պատեհ առիթներով հայտարարում էր, որ Հայաստանը մտադիր է Թուրքիայի հետ զարգացնել քաղաքակիրթ երկրներին վայել հարաբերություններ: Իրականում թուրքերին չէր կարող չանհանգստացնել այն փաստը, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը հետամուտ լինելը տեղ էր գտել Հայաստանի անկախության հռչակագրում, ի դեպ անհրաժեշտ ձայների նվազագույն՝ 131 քվեն ստանալով: Անհրաժեշտ է նշել, որ չնայած Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնումը անհաճո անակնկալ էր Թուրքիայի համար, քանզի Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը կունենար միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ նոր պահանջատեր, թուրքական կողմին առժամանակ հաջողվեց հասնել նրան, որ պաշտոնական Երևանը արտաքին քաղաքական օրակարգում ցեղասպանության խնդիրը չարծարծի:

Ուշագրավ է սակայն, որ Անկարան Հայաստանի նկատմամբ իր դիրքորոշումը որոշակիորեն հստակեցրեց միայն 1991թ. ապրիլին, երբ Մոսկվայում Թուրքիայի դեսպան Վուրալն այցելեց Հայաստան: Լևոն Տեր-Պետրոսյանը, Երևանում ընդունելով թուրք դիվանագետին, մասնավորապես ասաց. «ԽՍՀՄ-ը փոփոխությունների է ենթարկվում: Ուզում ենք բարեկամանալ: Պատրաստ ենք ամեն տեսակի փոխշահավետ համագործակցության»:[9] Համագործակցության առաջարկին ի պատասխան թուրք դիվանագետն ուներ հայ-թուրքական հարաբերությունների զարգացման իր տեսակետը: Վուրալի հետ հանդիպման ժամանակ էլ նախորոշվեցին երկու պետությունների կողմից հարաբերություններ զարգացնելու գերակայությունների տարբերությունները: Եթե Հայաստանի համար երկկողմ հարաբերությունների օրակարգում առաջնային էին տնտեսական կապերի աշխուժացման խնդիրները, թուրքական կողմի համար առանձնակի կարևորություն ունեին արցախյան հիմնահարցի կարգավորումն ու հայ (խորհրդային)-թուրքական գոյություն ունեցող սահմանի ճանաչման հարցերը:[10] Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հայկական տեսակետն ուրվագծվում էր ավելի չափավոր հիմքի վրա՝ Հայոց ցեղասպանության հարցը նորանկախ հանրապետությունը երկկողմանի հարաբերությունների համատեքստում չէր արծարծելու՝ այն համարվելու էր Սփյուռքի գործունեության ոլորտ: Փաստորեն թուրքական կողմն է առաջինը շոշափել ցեղասպանության խնդիրը երկկողմ հարաբերությունների համատեքստում:[11]

Ինչպես նշեցինք, Հայաստանի Հանրապետության անկախացումը համընկավ Թուրքիայի արտաքին քաղաքական ակտիվության նոր շրջափուլի հետ, և 1991թ. դեկտեմբերի 16-ի որոշումով թուրքական կառավարությունը, խորհրդային մյուս հանրապետությունների հետ մեկտեղ, ճանաչեց նաև Հայաստանի անկախությունը, սակայն հապաղեց դիվանագիտական

հարաբերություններ հաստատել պաշտոնական Երևանի հետ:[12] Ահա այստեղ է, որ թուրքական կողմը վկայակոչեց Հայաստանի Անկախության հռչակագիրը, պատճառաբանելով իր քայլը Հայաստանի հողային պահանջներով:[13] Հողային պահանջներ ասելով թուրքերը հասկանում էին անկախության հռչակագրի այն դրույթը, որ Հայաստանի Հանրապետությունը հետամուտ է լինելու Օսմանյան կայսրությունում և Արևմտյան Հայաստանում 1915թ. իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչմանը: Սա նշանակում է, որ Անկարայի կողմից Հայաստանի հետ պաշտոնական հարաբերություններ սկսելու հիմնական նախապայմանը եղել է Մեծ եղեռնի միջազգային ճանաչման խնդիրը: Հայ-թուրքական հարաբերությունների մեկ այլ անկյունաքարային խնդիր է հանդիսանում անվտանգության հարցը: Եթե մինչև ԽՍՀՄ փլուզումը Հայաստանը պաշտպանված էր խորհրդային հովանոցով, ապա անկախությունից հետո հայտնվում էր սեփական ուժերով արտաքին վտանգին դիմագրավելու մարտահրավերի առջև. այս դեպքում Հայոց ցեղասպանությունը ՀՀ արտաքին քաղաքականությունից դուրս մնաց, քանզի «անկախ Հայաստանն ավելի շատ վտանգներ ուներ հարցը պետական քաղաքականության հարթության բարձրացնելու, քան Խորհրդային Հայաստանը: Չկար Խորհրդային Միությունը՝ որպես անվտանգության համակարգ, ձևավորված չէին նոր անվտանգության համակարգեր, կազմավորված չէր հայկական բանակը, առկա էր ղարաբաղյան խնդիրը, և ընդհանրապես, տեղի էին ունենում աշխարհաքաղաքական, տարածաշրջանային վերադասավորումներ, գերտերությունների շահերի բախումներ»:[14]

Կարծում ենք շրջանառվող այս թեզը, որը կիսում են խնդրո առարկայի բազում ուսումնասիրողներ, բավարար կերպով հիմնավորված չէ: Հայոց ցեղասպանության խնդիրը չարձարձելը չէր ամրապնդում Հայաստանի անվտանգությունը: Առանց այդ էլ արցախյան հակամարտության ընթացքում Թուրքիան Հայաստանի նկատմամբ լիովին դրսևորեց բացահայտ թշնամանքի բոլոր հնարավոր ձևերը, փաստորեն չձեռնարկելով միայն զինված հարձակում Հայաստանի վրա:[15] Օրինակ, 1993թ. ապրիլին Քարվաճառի շրջանում ԼՂՀ պաշտպանության բանակի իրականացրած կայծակնային ազատագրության գործողությունից հետո Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալն ասեց. «Հայերը չեն սովորել Անատոլիայի փորձառության իրենց դասը և այն պատիժը, որ ստացել են»: Այս հայտարարությանը գումարվեցին «Հայաստանին ատամներ ցույց տալու» և «Կիպրոսյան տարբերակը» չբացառելու սպառնալիքները:[16] Միևնույն ժամանակ հայ-թուրքական սահմանում սկսվեցին զորաշարժեր, որոշ գնահատականների համաձայն հայ-թուրքական սահմանի շուրջ կուտակված զորքի թիվն այսօր անգամ հասնում է 200 հազար զինվորի:[17] Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ Անկարայի վերաբերմունքը ոչ թե «երրորդ կողմի» այլ ներգրավված պետության քայլեր էին: Հայաստանի տարածքային ամբողջականությունն ու անկախությունը խախտելու մեկ այլ փորձ թվագրվում է նույն 1993 թվականի սեպտեմբերով, երբ Մոսկվայում բռնկված պետական հեղաշրջման պարագլուխ, խորհրդարանի խոսնակ Խասբուլատովը գաղտնի բանակցությունների մեջ մտնելով Թուրքիայի հետ, որպես քաղաքական աջակցության հատուցում խոստացել էր չեզոքություն, եթե թուրքական կողմը փորձի ներխուժել Հայաստան և Վրաստան:[18]

Վերընշված իրողությունների համատեքստում, անդրադառնալով հայ-թուրքական հարաբերությունների հիմնախնդրին, թուրքագետ Հ. Չաքրյանը փաստում է, որ մեզանում Թուրքիայի հետ հարաբերությունների կարևորությունը գերագնահատվեց. Անկարան էլ իր հերթին թերագնահատեց հայ-ռուսական հնարավոր դաշինքի հավանականությունը. ահա թե ինչու Թուրքիան ճանաչեց Հայաստանի անկախությունը, սակայն վերջինիս հետ դիվանագիտական հարաբերություններ չհաստատեց:[19] Թվում է, թե Անկարայում չէին հավատում, որ պատերազմի զրկանքները կրող հայկական անկախ պետականությունը կարող է կենսունակ լինել, և երբ 1992թ. փետրվարին Դավոսի տնտեսական ֆորումին մասնակցող Հայաստանի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը փորձեց հանդիպել Թուրքիայի վարչապետ Դեմիրելին, զուսպ մերժում ստացավ:[20] Ինչևէ, Հայաստանն ապացուցեց իր կենսունակությունը և շարունակեց հետագա շփումները Թուրքիայի հետ: Հայոց ցեղասպանության խնդիրը սակայն, ըստ ՀՀ առաջին նախագահի խորհրդական Ժ. Լիպարիտյանի, հայ-թուրքական երկխոսության համատեքստում «քարձրացվել է տարբեր առիթներով ոչ պաշտոնական ձևով, այնպես, ինչպես ընդհանուր շահերից բխող այլ հարցեր»:[21] Լիպարիտյանի վկայության համաձայն արդեն 1992թ. հուլիս-օգոստոսին Երևան այցելած Թուրքիայի ԱՆԳ պատվիրակության հետ բանակցությունների ժամանակ այս հարցը չի քննարկվել:[22] Իրականում թուրքական կողմը երբեք չի հրաժարվել Հայոց ցեղասպանության խնդիրը որպես Հայաստանի հետ հարաբերությունների հաստատման նախապայման արծարծելուց: Անգամ 1993-ի հոկտեմբերին Մոսկվայում Թուրքական դեսպանատանը Հայաստանի նախագահի հետ կայացած հանդիպումից հետո դեսպան Քամիլը հայտարարել էր, որ հայ-թուրքական հարաբերությունների բարելավման համար Հայաստանը պիտի հրաժարվի 1915թ. իրադարձությունների խնդրին անդրադառնալուց:[23] Ավելին, նախկին արտգործնախարար Ա. Արզումանյանը «Հայկական Ժամանակ» օրաթերթին տված հարցազրույցում թվարկում է երկու երկրների միջև պաշտոնական հարաբերություններ հաստատելու թուրքական նախապայմանները. «չհիշատակել Հայոց ցեղասպանությունը, պաշտոնապես հրաժարվել պահանջատիրությունից, կասեցնել սփյուռքահայության հակաթուրքական գործունեությունը»:[24]

Փաստորեն Հայոց ցեղասպանության խնդիրը երկկողմ հարաբերություններում լուսանցքային տեղ էր գրավել: 1995-ի ապրիլին Հայաստանի իշխանությունները նոր դիվանագիտական քայլ արեցին երկկողմ հարաբերությունների բարելավման իրենց ընկալումը կյանքի կոչելու ուղղությամբ: 1915-ի Մեծ Եղեռնի 80-րդ տարելիցին նվիրված միջազգային գիտաժողովի ամբիոնից նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հայտարարեց, որ Հայոց ցեղասպանության մտահղացման, պատրաստման և իրագործման ողջ պատասխանատվությունը ընկնում է Սուլթան Համիդի և երիտթուրքերի վրա: Թուրքիայից չպահանջվեց պաշտոնապես ճանաչել ցեղասպանությունը: Իր ելույթում նախագահը հույս էր հայտնում, որ երկկողմ հարաբերություններում պիտի հաստատվի առողջ բանականության և բարձր բարոյականության մթնոլորտ:[25]

90-ականների կեսերին արդեն պարզ էր, որ հայ-թուրքական քաղաքական հարաբերությունները փակուղի էին մտել: Հայաստանի Հանրապետությունը չհաջողվեց որևէ նոր և լուրջ մոտեցում մշակել՝ միտված թուր-

քական կողմի հետ հարաբերությունների բարելավմանը: Նույն փաստն արձանագրում է նաև Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Վահան Փափազյանը: Իր ծրագրային ամփոփիչ հոդվածում, նվիրված Հայաստանի անկախ արտաքին քաղաքականության հնգամյակին, նախարարը փաստում է, որ իրական տեղաշարժեր այդ ոլորտում չեն արձանագրվել:[26]

Պե՞տք էր արդյոք, որ պետությունը բացահայտորեն չտանի ցեղասպանության միջազգային ճանաչման քաղաքականությունը և արդյոք հնարավո՞ր էր, որ երկկողմանի հարաբերությունները զարգանային այդպիսի փոխզիջման հիման վրա: Կարծում ենք, որ ո՛չ: Ընդհակառակը՝ թուրքերն առիթը բաց չէին թողնում հայտարարելու, որ Հայաստանի հետ հարաբերությունների բարելավման համար բարձրացված նախապայմանները չեն փոխվում:[27] Փաստորեն Անկարան Երևանի հետ չէր ցանկանում զարգացնել նորմալ հարաբերություններ:

Մեկնաբանելով առաջին նախագահի օրոք վարած քաղաքականությունը ՀՀ արտաքին գործերի նախկին նախարար Ալեքսանդր Արզումանյանն ասել է. «Մեր օրոք ցեղասպանության հարցը չի եղել մեր արտաքին քաղաքականության հիմքում: Մենք այդ հարցը չենք արծարծել տարբեր ատյաններում, կամ արծարծել ենք, եթե կոնկրետ նպատակ ենք ունեցել այդ պահին: Օրինակ, ՅՈՒՆԵՍԿՕ-ն հայտարարեց, որ Օսմանյան կայսրության 700-րդ տարեդարձը պաշտոնապես նշվի և պաշտոնապես մտցվի ՅՈՒՆԵՍԿՕ-ի հիշարժան տարեթվերի ցուցակի մեջ: Այդ ժամանակ Հայաստանը դեմ էր նման մոտեցման, և մեր հիմնական առարկությունը եղել է այն, որ Օսմանյան կայսրության օրոք գենոցիդ է իրականացվել թե՛ հայ ժողովրդի, թե՛ հույների, թե՛ բուլղարացիների հանդեպ: Մեր ջանքերի շնորհիվ ձևակերպումը փոխվեց, մտավ «Օսմանյան բազմազգ մշակույթի ձևավորման 700-րդ տարեդարձ» ձևակերպումը... Հայ դատի հարցը եղել է «սփյուռքի կազմակերպությունների հիմնական մոդուս-վիվենտին, նրանք առանց այդ հարցի չէին էլ կարող հայապահպան գործունեություն ծավալել: Նորմալ է, որ դաշնակցությունը դա հետապնդել է, բայց դա պետականորեն չպիտի հրահրվի, որովհետև դա կսրի հարաբերությունները».[28]

1998-ին տեղի ունեցած իշխանափոխությունից հետո հայ-թուրքական հարաբերություններում Երևանի դիրքորոշման մեջ առաջ քաշվեց Հայոց ցեղասպանության խնդիրը, որը որոշ թուրք քաղաքագետներ բնութագրեցին որպես Թուրքիայի նկատմամբ Հայաստանի քաղաքականության կոշտացում:[29] Նոր նախագահը դրկից երկրի նկատմամբ այլ ընկալումների կողմնակից էր: Այդ փոփոխության կարևորագույն կովանը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման անհրաժեշտությունն է՝ իրողություն, որը միշտ շեշտվել է Հայաստանի երկրորդ նախագահի ելույթներում: 1998-ին հրապարակավ, առաջին անգամ ՄԱԿ-ի ամբիոնից Ռ. Քոչարյանն ասաց. «Օսմանյան կայսրությունում հայերի 1915 թվականի ցեղասպանությունն իր ժամանակին պատշաճ կերպով չդատապարտվեց համաշխարհային հանրության կողմից, ինչը որոշ վարչակարգերի խրախուսեց նոր հանցագործություններ կատարել... Այս չարիքի դեմ պայքարի անհրաժեշտության հարաճուն ըմբռնման վկայությունն են նաև ներկա դարասկզբին հայերի ցեղասպանության դատապարտումն ու ընդունումը մի շարք երկրների խորհրդարանների կողմից»[30]:

Արդեն հաջորդ տարի նախագահ Քոչարյանը արձանագրում էր ցեղասպանության ճանաչմանն ուղղված առաջին քայլերի հաջողությունները՝ նշելով, որ դրանով 20-րդ դարի առաջին ոճրի դատապարտմանը միտված ջանքերը չեն դադարելու: Այս մասին էր վկայում նաև ԵԱՀԿ ստամբուլյան գագաթնաժողովում նախագահի ճառի հետևյալ հատվածը, որտեղ անդրադառնալով հայ-թուրքական հարաբերությունների զարգացման հնարավորությանը նախագահը նշեց. «Հարաբերություններում նոր էջ բացելու մեր ցանկությունը չի կարող հիմնված լինել ընտրողական պատմական հիշողության կամ լիակատար ամնեզիայի վրա: Մենք չենք կարող մոռանալ մեր ժողովրդի պատմության ողբերգական էջերը և ցեղասպանության նրա կրած ցավը: Բայց մենք նաև չենք ցանկանում մեր հարաբերությունների էվոլյուցիան և մեր ընդհանուր ապագան կախվածության մեջ դնել մեկնաբանությունների հակասություններից: Մեզ անհրաժեշտ է գտնել խնդրի լուծման բանաձևը, իսկ դրա համար այն պետք է քննարկել»:[31] Այս դիրքորոշումը հետագայում էլ մնաց անփոփոխ:[32]

Իրոք՝ Հայաստանի իշխանությունները Թուրքիայի հետ հարաբերությունների վերջին կամուրջները այրելու ոչ մի ցանկություն չունեին:

Անդրադառնալով երկկողմ հարաբերությունների զարգացումներին, նշվում էր, որ Թուրքիան, Երևանի հետ երկխոսությունը մերժելով, ունի իր մեղավորության մեծագույն բաժինը. «Հայաստանի հարաբերությունները Թուրքիայի հետ մնում են վերջինիս անզիջողական աղրբեջանամետ կեցվածքի և Հայաստանի շարունակվող շրջափակման պատանդը: Մենք Թուրքիային կոչ ենք արել և շարունակում ենք կոչ անել Հայաստանի հետ հարաբերություններ սկսել առանց նախապայմանների: 1915թ. հայերի ցեղասպանության փաստը ճանաչելու Թուրքիայի շարունակվող մերժումը մնում է հոգեբանական և քաղաքական խոչընդոտ, որը պետք է հաղթահարվի: ...Քանի դեռ Թուրքիան շարունակում է մերժել այդ անցյալը, մեր հաշտեցումը մնում է անվստահության պատանդ»:[33]

Հընթացս թուրքական հասարակությունը նույնպես կարևորում էր հայկական պաշտոնական տեսակետի պարզաբանումը: Այդ էր պատճառը, որ Ամերիկա-թուրքական հեղինակավոր CNN-Türk հեռուստաալիքը հենց Հայաստանի նախագահից ուղղակիորեն փորձեց ստանալ հայ-թուրքական հարաբերությունների մեկնաբանությունը[34]: Թուրք լրագրողը, մասնավորապես, հետաքրքրվում էր ցեղասպանության ճանաչման գործընթացի շարունակականությամբ և վերջինս առաջ տանող ուժերով: Պատասխանելով այդ հարցին նախագահը նշեց, որ ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը աշխարհասփյուռ հայության օրինական պահանջն է, իր իսկ հայտարարությունները որակելով որպես հարցի շուրջ Հայաստանի դիրքորոշման մշակում: Ռ. Քոչարյանը շեշտեց, որ Հայաստանի և Սփյուռքի ջանքերը Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում միևնույն ուղղությանն են միտված:[35]

Հարցազրույցի ընթացքում նշվեց, որ արդի միջազգային իրավունքի նորմերի համաձայն Հայաստանը Թուրքիայի նկատմամբ որևէ տարածքային պահանջներ չի կարող ունենալ: Ռ. Քոչարյանը նշեց, որ այդ հարցի քննարկումն առավել քան քաղաքականացված է՝ խորհուրդ տալով թուրքերին առավել քան հանգիստ նայել այդ խնդրին:[36]

Հայ-թուրքական հարաբերությունների վրա նշանակալի ազդեցություն է գործում երրորդ երկրներում Հայոց ցեղասպանության ճանաչման

գործընթացը: Թուրքերն ամեն անգամ չեն վարանում հայտարարել, որ հայկական այս խնդրում հայկական սփյուռքի նվաճումները բացասական ազդեցություն կունենան հայ-թուրքական հնարավոր երկխոսության վրա: Հարցն ԱՄՆ-ում օրախնդիր դառավ 2000 թվականի հոկտեմբերին, երբ հայկական լոբբիստական խմբերի ակտիվ գործունեության արդյուքում Ներկայացուցիչների պալատի օրակարգ էր մտնելու Հայոց ցեղասպանությունը դատապարտող H.RES. 398 բանաձևը:[37]

Բանաձևի շուրջ ընթացող քննարկումների սկզբից էլ պարզ էր, որ խորհրդարանական լսումները Թուրքիայի համար աննպաստ ընթացք էին ստանալու: Պաշտոնական Անկարան կրկին անգամ շրջանառության մեջ մտցրեց իր կողմից լայնորեն կիրառվող քաղաքական ճնշումները, և հասավ նրան, որ ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնը 2000թ. սեպտեմբերի 18-ին առանձին ուղերձով դիմի ԱՄՆ ներկայացուցիչների պալատի խոսնակ Դենիս Հասթերթին: Քլինթոնի ուղերձը խոսնակի ուշադրությունն էր հրավիրում ԱՄՆ արտաքին քաղաքական գերակայությունների և շահերի վրա. «Մենք նշանակալի շահեր ունենք այդ բարդ աշխարհագրական գոտում, այն է՝ զսպել Արևելքի և Կենտրոնական Ասիայի կողմից եկող սպառնալիքները, կայունություն հաստատել Բալկաններում և հայթայթել էներգակիրների նոր աղբյուրներ: Օրինագծի քննարկումն այս անհանգիստ ժամանակաշրջանում բացասաբար կանդրադառնա բոլոր այս շահերի վրա և կձախողի Հայաստանի ու Թուրքիայի միջև հարաբերությունների բարելավմանն ուղղված (նաև օրինագծի կողմնակիցների) ջանքերին: Ես լիովին հասկանում եմ, թե որքան սուր են ընկալում Թուրքիան և Հայաստանն այս խնդիրը: Վերջին հաշվով, այս ցավոտ խնդիրը կարող է լուծվել միայն այն դեպքում, երբ երկու կողմերը միասին քննեն իրենց անցյալը»:[38] ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում ընթացող քննարկումներն անմիջականորեն անդրադառնում էին Հայաստան-Թուրքիա հարաբերությունների վրա: Եթե բանաձևի քննարկման առաջին փուլերում Անկարան արձագանքում էր նյարդային ջղաձգումներով, ապա Ներկայացուցիչների պալատի օրակարգում հայտնվելու պահին Թուրքիան անցել էր սպառնալիքների լեզվին: Հայաստանի նկատմամբ կիրառվելու էին 17 պատժամիջոցներ, որոնցից առաջինը ՀՀ քաղաքացիների նկատմամբ անցագրային ռեժիմի խստացումը ուժի մեջ մտավ հենց քննարկումների օրերին: Թուրքերը մշակել էին ամերիկացիների դեմ գործողությունների 34 կետանոց ծրագիր, ԱՄՆ-ի օրենսդիրների կողմից բանաձևին կողմ քվեարկելու դեպքում:[39] Ինչևէ, բանաձևը չմտավ կոնգրեսի ստորին պալատի օրակարգ:

Հայաստանի հետ հարաբերություններ հաստատելու թուրքական մյուս հիմնական նախապայմանը վերաբերում էր Արցախի հարցում հօգուտ Ադրբեջանին կատարվելիք միակողմանի զիջումներին, ինչը հիմք է տվել կարծել, թե Հայաստանի հետ հարաբերությունների հարցում պաշտոնական Բաքուն կաշկանդում է Անկարայի գործողությունները: Մեր կարծիքով իրականությունն այլ է: Միանշանակ է, որ Հայաստանի հետ հարաբերություններում Թուրքիան Ադրբեջանի պատանդը չէ. Երևանի հետ հարաբերություններում թուրքերը առաջնորդվում են միմյայն սեփական շահերով և աշխարհաքաղաքական հաշվարկով: Այսուհանդերձ՝ հայ-թուրքական հարաբերություններում ցանկացած, թեկուզ ամենաչնչին տեղաշարժերը Բաքուն ընդունում է առանձնակի հիստերիայով: Դեռ 1995թ. փետրվարին ԱՄՆ փոխպետքարտուղար Ռիչարդ Հոլբրուքի Անկարային

ուղղված Հայաստանի հետ հարաբերությունների հաշտեցման կոչը Ադրբեջանում սվիններով ընդունեցին: Ի մասնավորի նախագահի խորհրդական Վ. Գուլուզադեն հայտարարեց. «Երևանի հետ հարաբերությունների հաստատումը. քանի դեռ հայերը դուրս չեն եկել Ադրբեջանի գրավյալ տարածքներից, դավաճանություն է Թուրքիայի կողմից»:[40] Անկարայի պատասխանը չոր և հստակ էր. թուրք պաշտոնյաները հայտարարեցին, որ արտաքին քաղաքականությունը այլ պետությունների քմահաճույքներով չեն պայմանավորում:[41] Ադրբեջանական հիստերիայի մեկ այլ վառ օրինակ էր աղմկահարույց Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի (ԹՀՀՀ) ստեղծմանը հաջորդած Ադրբեջանի արձագանքը:[42] Այս հարցը սակայն առանձին ուսումնասիրության խնդիր է:

Ինչպես նշել ենք հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդիրը սոսկ երկու պետությունների հետաքրքրության շրջանակներում չէ: Ազգամիջյան երկխոսության ծավալման առումով ուրույն հետաքրքրություններ ունեն նաև գերտերությունները, մասնավորապես ԱՄՆ-ն: Այս առումով հայ-թուրքական պետական փակ սահմանը ոչ թե երկու պետությունների, այլ երկու աշխարհաքաղաքական տիրույթների ՆԱՏՕ-ի և Ռուսաստանի շփման գոտու է վերածվում: Թուրքիայի և ԱՄՆ-ի շահը այսրկովկասյան քաղաքական սցենարի առումով հիմնականում համընկնում են: Երկու պետություններն էլ ձգտում են թուլացնել տարածաշրջանում ռուսական ազդեցությունը, որի կրողը համարվում է Հայաստանը: Ընդհանրապես Միացյալ Նահանգների հեռահար նպատակը Կովկաս-կենտրոնասիական տարածաշրջանում այնպիսի իրավիճակ ստեղծելն է, որ համաշխարհային ուժի կենտրոններից և ոչ մեկը չունենա այստեղ գերակշռություն:[43] Փաստորեն Հայաստանի հետ սահմանի բացումը և դիվանագիտական հարաբերությունների հաստատումը, առանց տարածաշրջանային կոմունիկացիոն ուղիների վրա թուրքական-կամ ամերիկյան վերահսկողության հաստատման, դուրս է պաշտոնական Անկարայի շահագրգռությունից:

Ղարաբաղյան հակամարտության նման ստատուս քվոյի դեպքում միմյայն Հայաստանի հետ սահմանի բացումը հաղորդակցության ուղիների առումով թուրքերին և ամերիկացիներին համարյա ոչինչ չի տալիս. Կարսում ավարտվող երկաթուղային փակուղին կավարտվի, օրինակ, Երևանում:

Սպիտակ Տունն ու Պետդեպարտամենտը հայերին ու թուրքերին միշտ էլ հաշտեցման կոչեր են արել, սակայն Քլինթոնի վարչակարգի արտաքին քաղաքական օրակարգում այս հարցը առաջնայիններից չէր: Անգամ 1999թ. ամռանը ՀՀ վարչապետ Վազգեն Սարգսյանի ԱՄՆ կատարած այցի ընթացքում փոխնախագահ Ալբերտ Գորի հետ հանդիպման ժամանակ բարձրացվեց Հայաստանի և Թուրքիայի սահմանի բացման նպատակով Թուրքիայի վրա ճնշում գործադրելու հարցը: Դրանից հետո էլ ԱՄՆ-ի պաշտոնյաները բազմիցս հայտարարել են, որ նախանձախնդիր են լինելու սահմանի բացման հարցում: Վաշինգտոնը, թերևս, կատարեց քայլեր նաև մեղմելու թուրք-հայկական կնճիռը, մասնավորապես Հայաստանում իր դեսպանի միջոցով ամեն կերպ հավաստիացնելով, որ ԱՄՆ-ն կողմ է հայ-թուրքական սահմանի շուտափույթ բացմանը:[44] Դեսպան Ջ. Օրդուեյը, մասնավորապես, ասել էր, որ հայ-թուրքական սահմանի խնդիրը ԱՄՆ-ի արտաքին քաղաքական օրակարգում է: «Մեծ Մերձավոր

Արևելքի» ծրագրի համատեքստում հայ-թուրքական երկխոսության խնդիրը միանշանակորեն բխում է նաև ԱՄՆ-ի շահերից: Այս ծրագիրը, որը միասնական նոր տիրույթում է փորձում տեսնել Հայաստանը և Թուրքիան, ինքնանպատակ կլինի, եթե չաշխատեն տարածաշրջանային տրասնպորտային կոմունիկացիաները, մասնավորապես՝ Կարս-Գյումրի երկաթգիծը, որը Անդրկովկասը Թուրքիային կապող միակ երկաթուղային հանգույցն է: Ահա այս համատեքստում են հնչել ԱՄՆ դեսպանի հայտարարությունները հայ-թուրքական սահմանի հնարավոր բացման մասին: Ինչևէ, պարզ է այն իրողությունը, որ Հայաստան-Թուրքիա սահմանը սոսկ երկու պետությունների սահման չէ, այլ երկու ռազմաքաղաքական ուժի կենտրոնների բաժանարար գիծ:

Ամեն դեպքում վերընշված հայտարարությունները և Օսկանյան-Գյուլ հանդիպումների շարքը որոշ հույսեր էին ներշնչել ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանին, որը հուլիսի 19-ի ասուլիսում դատապարտեց այն բոլոր ուժերին, որոնք դեմ են սահմանի բացմանը:[45] Եվ այն կարծիքը, թե 2003-ը բեկումնային է լինելու հայ-թուրքական հարաբերությունների համար, իրականում չարդարացավ՝ թուրքական կողմը չհրաժարվեց Հայաստանի նկատմամբ դեռ 1990-ականների սկզբում որդեգրած քաղաքական գծից, զուգահեռաբար ստեղծելով լուրջ քննարկումների ծխածածկույթ:

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երկու պետությունների միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ոլորտում փորձարկվեցին հասարակական դիվանագիտության, կամ, այլ կերպ ասած, երկրորդային դիվանագիտության (second track diplomacy) միջոցները և հնարավորությունները: Այդ էր պատճառը, որ Երևանի ու Անկարայի միջև պաշտոնական հարաբերությունների բացակայությունը որոշակիորեն ակտիվացրեց հասարակական դիվանագիտությունը, ձևավորվեցին (ոչ առանց դրսի ուժերի գործուն աջակցության) կազմակերպություններ, որոնք իրենց գործունեության նպատակը հռչակեցին հայ-թուրքական երկխոսությունը:

Հասարակական շփումները կարելի էր անվերապահորեն ողջունել, եթե որոշ նմանօրինակ նախաձեռնությունների շուրջ չպտտվեր թուրքական պետության կողմից մշակված «պատմությունը պատմաբաններին թողնելու» թեզի ուրվականը: Եվ ինչպիսի՞ երկխոսության մասին է խոսքը, եթե ի սկզբանե շահարկման առարկա պիտի դառնա Հայոց ցեղասպանությունը: Փորձենք պատասխանել հայ-թուրքական երկխոսության ամենացավոտ խնդիրց բխող բաց հարցերին:

Ինչպես նշեցինք, հասարակական դիվանագիտությունը պիտի կատարի երկխոսության հասարակական պատվերը: Գործընթացը պիտի ներառի ժողովուրդների համարյա բոլոր շերտերը՝ արտահայտելով ու պաշտպանելով նրանց հավաքական շահերը: Կարծում ենք նաև, որ հասարակական դիվանագիտությունը պիտի լինի անմիջական, երկկողմ, այն չպիտի պարտադրված լինի որևէ երրորդ ուժի կողմից: Նման երկխոսությունը միտվելու է բանակցող կողմերի դիրքորոշումների իրական մերձեցմանը:

Հայտնի է, որ երկխոսության Հայ-թուրքական հասարակական շփումներում հիմնական դերակատարություն են ունեցել Թուրք-հայկական գործարարության զարգացման կոմիտեն (ԹՀԳԶԿ)[46] և Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովը (ԹՀՀՀ):[47]

Թուրք-հայկական գործարարության զարգացման կոմիտեն հիմնվել է 1997թ. մայիսի 3-ին և խնդիր էր դրել աջակցել Հայաստանի և Թուրքիայի գործարարների համագործակցությանը: Համաձայն կազմակերպության հինգամյա գործունեության զեկույցի՝ նրա խողովակներով են իրականացվել թուրք-հայկական շփումների 70%-ը:[48] Թուրք հայկական գործարարության զարգացման կոմիտեն գտնում է, որ գործարար շփումների միջոցով հնարավոր է հասնել երկու ժողովուրդների միջև կառուցողական և գործակցային մթնոլորտի ձևավորման:[49] Ի դեպ, կազմակերպության հետաքրքրությունների շրջանակը տարածվում է տնտեսական և հասարակական տարբեր ոլորտների վրա: Իր առջև դրած թերևս ամենակարևոր խնդիրը կազմակերպությունը համարում էր Մերսին-Երևան-Բաքու երկաթգծի գործարկումը:[50] Գործարարներն առաջնային են համարում նաև TRACECA ծրագրի իրականացումը, ազատ առևտրի գոտու ստեղծումը, օդային հաղորդակցության զարգացումն ու տարածաշրջանային արդյունաբերական ճյուղային համագործակցությունը (տեքստիլ, գյուղատնտեսական, տեղեկատվական տեխնոլոգիաներ, շինանյութերի արտադրություն, տուրիզմ և այլ բնագավառներում): Կոմիտեն աջակցություն է ցուցաբերում նաև մշակութային համագործակցությանը՝ գիտական և ուսանողական շփումներին: ԹՀԳԶԿ-ն փորձեց կազմակերպել թուրք և հայ պատմաբանների ֆորում՝ ազգամիջյան պատմության խնդրահարույց հարցերը ճշտելու համար:

Կազմակերպության գործունեությունը կարելի բնութագրել որպես բարի ցանկություններ: Միանշանակ է, որ քաղաքական հարաբերությունների բացակայությունը շատ հաճախ գործարարների նախաձեռնությունները դնում է հարվածի տակ: Դեռևս 1998թ. փետրվարի 13-ին, հանդիպելով Հայաստանի արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի հետ, կազմակերպության համանախագահ Քաան Սոյակը հույս հայտնեց, որ ավելի ակտիվ տնտեսական շփումները իրատեսական են դարձնում քաղաքական հաշտեցման հնարավորությունները:[51] Հետագայում՝ 1999-ի դեկտեմբերին, «Թրքիշ դեյլի Նյուզ» օրաթերթին տված հարցազրույցում, մեկնաբանելով Հայաստան կատարած այցի արդյունքները, Սոյակը շեշտում է. «Հայաստանը ցանկանում է Թուրքիայի հետ ունենալ ջերմ և բարեկամական հարաբերություններ»:[52] Միակ բարդ հիմնահարցը, ըստ Սոյակի, Հայոց ցեղասպանության բաց վերքն է:[53]

Ընդհանրապես բարդ է որոշակի գնահատական տալ ԹՀԳԶԿ-ի գործունեությանը, քանզի ոչ կառավարական կազմակերպությունների համար հեշտ չէ հայ-թուրքական հարաբերությունների խոչոչխութերում լուծման ուղիներ գտնել, այն պարզ պատճառով, որ վերջիններս բավականին զգայուն են աշխարհաքաղաքական և դիվանագիտական ցանկացած վայրիվերումների նկատմամբ: Ցայսօր չի սկսվել կազմակերպության առաջնային ծրագրերի իրականացումը: Միամտություն կլիներ կարծել, որ կառույցին կհաջողվի միանգամից հալեցնել երկկողմանի անհանդուրժության սառույցը (2002թ. մարտի 28-ին Երևանում անցկացված ամերիկահայ ուղահար Ռիչարդ Հակոբյանի և թուրքական «Լալեզար» խմբի համերգը համեմվեց ՀՅԴ երիտասարդական թևի անդամների հախուռն կազմակեր-

պած բողոքի ակցիայով՝ հենց համերգասրահի առջև): Առանձնակի մտահոգություն է հարուցում այն փաստը, որ ցեղասպանության հարցի շուրջ հայ և թուրք պատմաբանների ֆորումի գաղափարը, թերևս, թուրքական «Հայոց ցեղասպանությունը պատմաբանների գործն է» նշանաբանի քողարկված տարբերակն է: Հայ և թուրք պատմաբանների ֆորումի գաղափարն իրականացնելու փորձ կատարվեց 2002թ. ամռանը, սակայն այդ նախաձեռնությունը ձախողվեց:

2001թ. մարտի 10-ին ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանի և ԹՀԳՁԿ համանախագահների հետ հերթական հանդիպման ժամանակ նշվել էր, որ Հայաստանի արտաքին գործերի գերատեսչությունը դեմ չէ Թուրքայի արտգործնախարար Իսմայիլ Ջեմի առաջարկած Հայաստան-Ադրբեջան-Թուրքիա եռակողմ ֆորմատով հանդիպմանը:[54] Սույն նախաձեռնությունը Ջեմը հանդես էր բերել դեռևս 2001թ. հունվարի 17-ին. ի դեպ՝ այդ օրերին Հայաստանը նման նախաձեռնությունն ընդունել էր որոշակի անբարյացկամությամբ:[55] Հայ-թուրքական ազգամիջյան հարաբերությունների հասարակական մեկ այլ մարմնի՝ Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի ստեղծումից մի քանի օր անց, CNN-Türk հեռուստաընկերության հուլիսի 14-ի ուղիղ եթերում Թուրք-Հայկական գործարարության զարգացման կոմիտեի թուրքական կողմի համանախագահ Քաան Սոյաքը շուրջ մեկ ժամ տևած հարցազրույցի ընթացքում քննարկել է հայ-թուրքական հարաբերությունների զանազան հիմնախնդիրները, որի մեխն է եղել սփյուռքահայերի տուրիստական ներուժը: Նշվել էր, որ 150 հայ զբոսաշրջիկներ Արևմտյան Հայաստանով շրջագայելու համար ծախսել էին մոտ 1 միլիոն դոլար: Անդրադառնալով Հայաստանի նկատմամբ թուրքական պաշտոնական դիրքորոշմանը՝ Սոյաքն իր խնդիրը չհամարեց Անկարայի պաշտոնական տեսակետը մեկնաբանելը, այլ նշեց, որ ամեն ինչ պիտի արվի տարածաշրջանային համագործակցությունը զարգացնելու նպատակով: Հեռուստադիտողներից մեկի՝ հայկական լոբբիի գործունեությանը վերաբերող հարցին ի պատասխան գործարարը նշեց, որ լոբբիստական խմբերը ներկայացնում են հայության միայն 20 տոկոսը, և որ Թուրքիան խնդիր ունի կապ հաստատել սփյուռքահայության մնացած 80 տոկոսի հետ, հանուն հենց ապագայի:[56]

Միևնույն ժամանակ Թուրք-հայկական գործարարության զարգացման կոմիտեն, որն ակտիվորեն աջակցում էր պատմաբանների երկխոսության գաղափարին, պիտի կազմակերպեր թուրք պատմաբանների այցը Հայաստան: «Արմենպրես» գործակալությանը հաղորդել էր, որ մայիսի 30-ին չորսօրյա առաքելությամբ Հայաստան էին ժամանելու Թուրքիայի «Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի» տնօրեն Ումիթ Օզդախը, կենտրոնի Կովկասի բաժնի վարիչ Յաղար Քալաֆաթը, Թուրքիայի «Հայկական հետազոտությունների ինստիտուտի» տնօրեն Օմեր Էնգին Լյութեմը և փորձագետ Մահմադ Նիյազի Մեզգին:[57] Նախատեսված էին թուրք հետազոտողների հանդիպումները Հայաստանում գործող ռազմավարական հետազոտությունների կենտրոնի ներկայացուցիչների, այդ թվում ՀՀ առաջին արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանի հետ: Ենթադրվում էր, որ թուրքերը Գիտությունների ազգային ակադեմիայի պատմաբանների և ակադեմիկոսների հետ կքննարկեն Հայոց ցեղասպանության խնդիրը:[58] Սակայն շուտով պարզ դարձավ, որ թուրք հետազոտողների խմբի Հայաստան այցելությունը չեղյալ է հայտարարվել: Այս

մասին «Արմինֆո» գործակալությանը տեղեկացրել էր Թուրք-հայկական գործարարության զարգացման կոմիտեի հայկական կողմի համանախագահ Արսեն Ղազարյանը: Ու թեև Ա. Ղազարյանը չնշեց այցը չեղյալ հայտարարելու պատճառները, «Արմինֆոն» հաղորդում էր, որ պատճառը սպասվելիք այցի մասին հայկական լրատվամիջոցների հրապարակումներն էին: Այցի հետաձգման պատճառների վերաբերյալ պարզաբանումներ տվեց ԹՀԳԶԿ-ի թուրքական կողմի համանախագահ Քաան Սոյաքը: «Ազգ» օրաթերթին տված հարցազրույցում, այցի հետաձգման պատճառներին անդրադառնալով, Սոյաքը նշեց. «Հայկական մամուլում խմբի այցելության մասին հրապարակվեց թյուրիմացությունից բխող սխալ մի լուր, որտեղ ասվում էր, որ խումբը Հայաստանում կայցելի Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ: Մինչդեռ ծրագրով դա չէր նախատեսվում: Երբ այդ լուրը հրապարակվեց, թուրք հետազոտողներն այցելությունը հետաձգեցին, այլ ոչ թե դա չեղյալ հայտարարվեց»:[59] Մինչդեռ 2002թ. մայիսի 7-ին, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը ստացել էր ԹՀԳԶԿ-ի նամակը, որում ասվում էր, որ վերընշյալ գիտնականները ցանկություն էին հայտնել հանդիպելու թանգարան-ինստիտուտի տնօրեն Լ. Բարսեղյանին և, «որոշ տեղեկատվություն ստանալ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի մասին»:[60] Սոյաքի կարծիքով այցը թուրք-հայ գիտական երկխոսության հիմք կարող էր լինել: ԹՀԳԶԿ-ի թուրք համանախագահը նշեց, որ իրենց կազմակերպությունը, սկսած 1997թ. անմիջականորեն մասնակցում է թուրք-հայկական շփումներին: Երկկողմանի հարաբերությունների զարգացման վերաբերյալ ՀՀ առաջին դեմքերի դերակատարության մասին Սոյաքն ասաց հետևյալը. «Որքան էլ թուրքական որոշ շրջանակներում ընդգծվի, թե Տեր-Պետրոսյանի իշխանությունը Թուրքիայի համար հարմար առիթ էր, կարծում եմ, նախագահ Ռոբերտ Քոչարյանի օրոք թուրք-հայկական հարաբերություններում կարևոր քայլեր են կատարվել, որոնցից կարելի էր առանձնացնել գիտական և հասարակական կառույցների միջև ստեղծված կամուրջները: Այս հանգամանքը պարզորոշ ցույց էր տալիս, որ մեր երկու երկրների հարաբերություններն ամենևին նահանջ չեն ապրել»:[61]

ԹՀՀՀ-ն հենց երկրորդային դիվանագիտության ամերիկյան մոդելի տեղայնացումն էր: Հանձնաժողովի ստեղծումն ու գործունեությունը Հայաստանում, Սփյուռքում և Թուրքիայում լայն հասարակական քննարկման առարկա դարձավ: Համաձայն հանձնաժողովին մոտ կանգնած որոշ աղբյուրների հանձնաժողովի ստեղծման վերաբերյալ բանակցություններ սկսվել են առնվազն 2001թ. գարնանը, սակայն վերջինիս գործունեության մասին բացեիբաց հայտարարվեց միայն 2001թ. հուլիսի 9-ին: Հայաստանում և Սփյուռքում հաշտեցման հանձնաժողովի ստեղծումը սառը ընդունելություն գտավ: Թուրքական հասարակական կարծիքի դրսևորումները հաշտեցման հանձնաժողովի վերաբերյալ ավելի զուսպ և լավատեսական էին: Լավատեսական էր նաև ամերիկյան արձագանքը: ԹՀՀՀ-ի հայ անդամներն իրենց կիսագաղտնի աշխատառճի համար հասարակական քննադատության հզոր ալիքի տակ ընկան: Այդ քննադատությունը բխում էր այն իրական մտահոգությունից, որ ԹՀՀՀ-ի հանդիպումների ընթացքում հնարավոր է քննարկվեն հարցեր, որոնք հետագայում շահարկվեն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը ձախողելու համար:

Չնայած հայ հասարակության դատապարտմանը հանձնաժողովի հայ անդամները դրսևորում էին ծայրաստիճան ինքնավստահություն: ԹՀՀՀ-ն ցայսօր էլ շարունակում է իր գործունեությունը:[62] Վերընշվածի լույսի ներքո, Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովը միայն մեծ վերապահումով կարելի է համարել իրական հասարակական երկխոսություն: Ստեղծման առաջին օրվանից ԹՀՀՀ-ի աշխատանքների նկատմամբ մոտեցումները երբեք միանշանակ չեն եղել: Հասարակական հանձնախմբի ծպտյալ աշխատառոճը և ԹՀՀՀ-ի շուրջ ստեղծված բարոյահոգեբանական մթնոլորտը բազմաթիվ ձախողումների պատճառ դարձավ: Հայտարարելով, որ ԹՀՀՀ-ում ընթացող քննարկումների համար «տաբուներ չկան», հանձնաժողովականները սկսեցին անդրադառնալ այնպիսի հարցերի, որոնք պահանջում էին բացարձակ պատասխանատու մոտեցում (ինչը որոշ դեպքերում լիովին բացակայում էր) և մասնագիտական հմտություններ: Հասարակական երկխոսության այս կառույցի ձախողման պատճառներից դարձավ այն, որ ԹՀՀՀ-ի գործունեությունը սկսեց անհարկի շահարկվել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի համատեքստում: Հենց Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը հանդիսացավ այն ջրբաժանը, որը հասարակական դիվանագետներին ցայսօր չի հաջողվում հաղթահարել: Հավանաբար, հայ հանձնաժողովականները չհասկացան, որ իրենց թուրք գործընկերները չեն կարող հրաժարվել տարիներ շարունակ, անմիջականորեն իրենց իսկ կողմից վարված Հայոց ցեղասպանության ժխտման գործելակերպից: Իսկ թուրք հանձնաժողովականներին է չհերիքեց քաղաքական քաջություն, պատմության նկատմամբ առկա սեփական կարծրատիպերը հաղթահարելու համար:

Առանցքային մեկ այլ խնդիր է ԹՀՀՀ-ի աշխատանքներում ԱՄՆ Պետդեպարտամենտի ներգրավվածության հարցը: Ինչպես արդեն նշել ենք, սեփական տարածաշրջանային հետաքրքրություններից ելնելով, ԱՄՆ-ն մեծապես շահագրգռված է մեր աշխարհագրական գոտում ամերիկյան մոդելի «ստատուս քվո» ունենալու մեջ: Ամերիկայում հասկանում են, որ հայ-ռուսական ռազմաքաղաքական ակտիվ համագործակցության կարևորագույն խթաններից մեկը Թուրքիայի կողմից Հայաստանին սպառնացող ռազմական ներխուժման վտանգն է: Ամերիկյան տեսլականով, Հայ-թուրքական հաշտեցման դեպքում պաշտոնական Երևանն ավելի քիչ կառաջնորդվի մոսկովյան կողմնորոշիչներով:

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՄՈԴԵԼ

Այս ամենին զուգահեռ թուրքական գիտական և հասարակական շրջանակներում առկա են այնպիսի տեսանկյուններ, որոնք ոչ միայն չեն մերժում հայ-թուրքական կառուցողական երկխոսությունը, այլև փորձում են հարաբերությունների բարելավման իրատեսական ուղիներ ներկայացնել: Կարելի է վստահորեն ասել, որ թուրքական հասարակությունում ձևավորվում է մի այնպիսի շերտ, որը չի ժխտում Հայոց ցեղասպանությունը և անգամ կոչ է անում թուրքական կառավարությանը ընդունել պատմական ճշմարտությունը:

Թուրք հասարակությունում ազգամիջյան երկխոսության ջատագով կարելի է համարել գիտնական Թաներ Աքչամին. Ցեղասպանության

Հայաստանի ազգ. Գրադարան ՀՍՍՀ

ժխտման պատճառները և հայ-թուրքական հարաբերությունների խնդիրը Աքչամի գիտական պրպտումների ոլորտներից են: Թաներ Ակչամը պատմական ճշմարտությունն ասելու կոչ է անում թուրք հասարակությանը:[63] Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականության պատճառներին Թ. Աքչամը անդրադառնում է «Մոնդ դիպլոմատիկի» 2001թ. հուլիսյան համարում տպագրված «Պաշտոնական պատմության ծնունդը. Հայոց ցեղասպանության արգելված թեման հետապնդում է թուրք հասարակությանը» վերլուծական հոդվածում՝ վեր է հանելով պատմական կեղծարարության խնդիրը, Աքչամը նշում է, որ իր արարքի ընդունումը Թուրքիայի համար կնշանակեր, որ ներկայիս պետությունը կառուցած անձանց մի մասը եղել են մարդասպաններ: Այդ իսկ պատճառով զարմանալի չէ, որ «ցեղասպանության» եզրը թուրքական հասարակությունը հիվանդագին է ընկալում: Ըստ Աքչամի, Թուրքիայի հիմնադիր Մուստաֆա Քեմալը տասնյակ անգամներ խոսել և դատապարտել է այդ նողկալի կոտորածներն ու պահանջել է հանցագործների պատիժը, սակայն իրականում նա ևս օգտվում էր հայասպանության մեջ ակտիվորեն ներգրավված գործիչների ծառայություններից: Տեղահանության գլխավոր կազմակերպիչներից Շուքրու Քայան Մուստաֆա Քեմալի օրոք դարձավ ներքին գործերի նախարար, իսկ մեկ ուրիշը՝ ժողովրդա-հանրապետական կուսակցության գլխավոր քարտուղար, Բիթլիսի, ապա Հալեպի նահանգապետ Մուստաֆա Աբդուլհալիք Ռենդան ստացավ նախարարի, ապա՝ Ազգային ժողովի նախագահի պաշտոնները, Դիարբեքիրի դահիճ Ազիֆ Ֆնզին 1922-1923թթ. տարածքային կառավարման նախարարն էր: Հոդվածագիրը այնուհետև խոստովանում է, որ ցեղասպանության ճանաչումն ուժեղ հարված կլիներ թուրքական պետությանը, քանզի իրականում հասարակության կարծիքի համար կործանարար կլինի այն իրողությունը, որ պետության հայրերը եղել են քրեական հանցագործներ:[64]

Հայ-թուրքական հարաբերությունների անհրաժեշտությանը Աքչամը պատասխանում է հարցով. «Իսկ արդյո՞ք կա մեկ այլ տարբերակ քան երկխոսությունը»:[65] Պատասխանը հեղինակի համար միանշանակ է. հայկական և թուրքական կողմերը, իհարկե ոչ առանց դժվարության, պիտի սկսեն միմյանց ընդառաջ քայլեր կատարել: Աքչամը նկատել է այն իրողությունը, որ չնայած թուրքական հասարակությունը սկսել էր հաղթահարել «հայկական տաբուն», երկկողմ իրական հարաբերությունների առումով գործընթացը դանդաղ է առաջ շարժվում: Իսկ երկխոսությունը խաթարող ազդեցիկ պատճառներից Աքչամը նշում է թուրքական ՁԼՄ-ների գործունեությունը, որոնք շարունակում են թուրքական հասարակական գիտակցության մեջ թշնամանք սերմանել հայ ժողովրդի նկատմամբ:

Թաներ Աքչամը երկխոսություն սկսելու քաղաքական որոշումն ընդունելու պատասխանատվությունը դնում է թուրքական իշխանությունների վրա, սակայն ազգամիջյան թնջուկի լուծումը պիտի փնտրեն և՛ թուրքերը, և՛ հայերը:[66] Թուրք գիտնականն անդրադառնում է նաև երկկողմ հարաբերությունները պայմանավորող անկյունաքարային խնդրին՝ Հայոց ցեղասպանությանը: Այս հարցին անդրադառնալիս Աքչամը կշեռքի մի նժարին դնում է հայերի կողմից ցեղասպանության ճանաչման համար մղվող պայքարը, մյուսին՝ թուրքական կառավարության շարունակական ժխտումը:[67]

Թաներ Աքչամի կարծիքով թուրք-հայկական հարաբերություններն ունեն չորս հարթություն.

1. Թուրքիայի և Հայաստանի միջպետական հարաբերությունները,

2. Թուրքիայի և հայկական փոքրամասնության հարաբերությունները.

3. Թուրքիայի և Հայկական սփյուռքի հարաբերությունները,

4. Թուրքական նոր ձևավորվող սփյուռքի շփումները հայկական սփյուռքի ու Թուրքիայի հետ:[68]

Այս բազմավեկտոր երկոսությունն անգամ բազում հիմնախնդիրներ է առաջ բերում, քանզի հայերի ու թուրքերի արանքով անցնում է «հավաքական հիշողության» իրարամերժ ջրբաժանը:

Երկկողմանի հարաբերություններում առկա խնդիրներ վեր հանելուց բացի, Աքչամն առաջարկում է նաև լուծումներ: Ըստ նրա, երկխոսությունը ոչ այնքան «նույն բանն ասելն է», որքան նույն արժեհամակարգով դատողություններ անելը: Քանի որ այս հիմնահարցին երկար ժամանակ չեն անդրադարձել, վերջինիս նկատմամբ ձևավորվել է թյուրըմբռնում և կողմնակալ մոտեցում: Ու քանի որ պատմությունը հայ- թուրքական հարաբերությունները պայմանավորող կարևորագույն գործոններից է, հետազոտողը հայ և թուրք պատմաբաններին կոչ է անում վեր կանգնել ազգայնականությունից ու իրենց ուսումնասիրություններում լինել անկողմնակալ: Աքչամը թուրքական հասարակությանը հիշեցնում է, որ ժխտելով Հայոց ցեղասպանությունը, թուրքերը հայերին հասցնում են հոգեբանական հերքական հարվածը: Հարվածելու փոխարեն Թուրքիան պիտի պատրաստ լինի լսել հայերին, «հասկանալ այլոց ցավը և կիսել այն»:[69] Այս պարագայում իրենք, թուրքերը հնարավորություն կստանան խոսելու սեփական պատմության մասին, չէ որ ժամանակակից Թուրքիայի խնդրիների մեծամասնությունը արմատներով գնում են դեպի անցյալ:

Աքչամի կողմից մշակված երկխոսության տեսլականի համաձայն պիտի մեկտեղվի ու ուսումնասիրվի երկկողմ հարաբերությունների վերաբերյալ առկա տեսական նյութը, մշակվեն պատմության ուսումնասիրության նկատմամբ միասնական մոտեցումներ: Այս ամենը իրականություն դարձնելու համար պիտի իրականացվի լայնամասշտաբ թարգմանչական աշխատանք, որի իմաստը միմյանց տեսակետները փոխադարձաբար հասկանալի դարձնելն է:

Թուրք-հայկական երկխոսության տեսաբանները միասնական են իրենց այն համոզմունքում, որ Թուրքիան պիտի ճանաչի Հայոց ցեղասպանությունը և քայլեր կատարի նրա հետևանքների վերացման ուղղությամբ: Հայկական հասարակագիտական միտքն այս խնդրի շուրջ երկու հիմնական մոտեցում է մշակել:

Հայ-թուրքական երկխոսության հնարավորությունների իր տեսակետն ունի իրավապաշտպան Ռ. Զարաքոլուն, որը չի վախենում բացահայտ նշել 1915-ի դեպքերի պատասխանատուներին. «Մարդկային այս կորուստների քաղաքական պատասխանատվությունը ընկնում է անկասկած իր քաղաքացիների դեմ պատերազմ հայտարարած Միություն և Առաջադիմություն կուսակցության վրա»:[70] Իրավապաշտպանը բարձրացնում է հետաքրքիր մի խնդիր. իսկ ի՞նչպիսի կլիներ Թուրքիայի էթնիկական պատկերը, եթե ցեղասպանությունը տեղի չունենար. «Ազգագրական տեսակետից Անատոլիայի հայերի թիվը կհաշվեր վեց միլիոնով ավելի, նույնը վերաբերում է հույներին»:[71] Զարաքոլուն հասկանում է, որ միայն անցյալում կատարվածն ըմբռնելու և զղջալու միջոցով է հնարավոր կերտել մի-

ասնական ապագա: «Ես մի երազանք ունեմ.-ասում է թուրք գիտնականը.- տառապանքն իհարկե երբեք չի կարող հատուցվել... Նվազագույն լուծումը, որ գտել է մարդկությունը նման դեպքերի համար վնասի հատուցումն է, եթե նույնիսկ այդ հատուցումը չի կարող ետ բերել զոհերին և կամ էլ մոռացության տա տառապանքը»:[72] Իսկ վնասի հատուցումը հնարավոր է պատմական ժառանգության փրկության միջոցով: Ռ. Զարաքոլուի կարծիքով թուրքերը պարտավոր են ասել ճշմարտությունը և երևան հանել ողջ կատարվածը: Պետք է «այդ իրադարձությունները հավիտյան գրանցված մնան մեր հիշողության մեջ»:[73] Ներողության մաս պիտի լինի նաև Արևմտյան Հայաստանում ծնվածներին և նրանց ժառանգներին քաղաքացիություն շնորհելը և «ավերված ու ջնջված» մշակույթների ուսումնասիրության կենտրոններ ստեղծելը: Այս ամենը հնարավոր է այնժամ, երբ հայ-թուրքական մեծ քննարումը հնարավոր դառնա, երբ ուսումնասիրվեն իրադարձությունների պատճառները:

Թուրք մտավորական Թահսին Ջելալը արձանագրում է. «Հայկական հարցի մասին ծանոթ ենք միայն թուրքերի ասածներից, այսինքն՝ նրա պաշտոնական հերքմամբ: Այդ նույն հերքումը իշխում է թե՛ պաշտոնական և թե՛ անհատական դիրքորոշումների մեջ: Այսօր թուրք քնակչության տարբեր սերունդներն իրականում ի՞նչ գիտեն հայերի և նրանց հանդեպ գործված ոճրի մասին: Պաշտոնական ճառերում բացառվում է հայկականության որևէ ակնարկ, թե Թուրքիայի ներկա տարածքում հայեր են եղել և այդ նպատակով՝ հիշողությունից լիովին ջնջվել են 1915-ի քստմնելի գործերի: Սակայն որքան էլ կարճ լինի մարդկանց հիշողությունը նման ահարկու դեպքերն անհնար է շրջել: Ի՞նչ ասել այն երեխաների ու կանանց մասին, որոնք 1915 թվին բռնի թուրքացվեցին: Թուրքական Վիլլի Բրանդի ծնունդը վաղվա համար չէ: Հայկական հարցը պատկանում է բոլոր նրանց, ովքեր ձգտում և գործում են, որպեսզի այս հողի վրա ավելի շատ արդարություն լինի: Դրանք մեզ հույս են ներշնչում, որ մի օր զոհերին կվերադարձվի արդարությունը, և ոճիրը հատուցում կստանա: Այդպիսով կվերականգնվի մարդու պատիվը»:[74]

Մեկ այլ թուրք պատմաբան Մեթե Թունչայը նշում է. «Գալով Թուրքիայի և Հայաստանի հարաբերություններին, ես կանխատեսում եմ երկու տեսակի դժվարություններ: Առաջինը վերաբերում է անցյալին: Ըստ իմ ունեցած տեղեկությունների Հայաստանը պահանջում է Թուրքիայից, որ նա ներողություն խնդրի «Հայկական Բռնագաղթի» համար և վնասուց հատուցում կատարի:... Ես ցանկանում եմ, որ Հայաստանի ղեկավարները սին հույսեր չներշնչեն իրենց ժողովրդին: Ո՛չ ներկայումս, ո՛չ էլ մոտիկ ապագայում թուրք Հանրապետության ոչ մի կառավարություն չի համարձակվի նման քայլի դիմել և հակադրվել երկրում իշխող հասարակական կարծիքին»:[75] Թունչայն ավելի արմատական է արտահայտվում խնդրո առարկայի նկատմամբ, պատասխանատվության կոչ անելով նաև հայերին. «Երբ ես քննում եմ հայ և թուրք հեղինակների աշխատությունները այս նյութի վերաբերյալ, տեսնում եմ, որ անցած ութսունհինգ տարիները բավարար չեն եղել արդարացիորեն դատելու անցյալը: Առայժմ պահանջենք թուրք և հայ կառավարություններից, որ նրանք հրաժարվեն սադրիչ և միտումնավոր հրատարակությունները քաջալերելուց»:[76]

Ցավալի փաստ է արձանագրում մեկ այլ թուրք գործիչ՝ Օրալ Չալըշլարը: Վերջինիս կարծիքով մեղավորներ փնտրելն արդեն ուշ է, ավելի

կարևոր է այն, որ թուրքերն անցյալից դասեր չեն քաղել. «Շատ ժամանակ է անցել այդ դեպքերից հետո: Արդյո՞ք հիմա իսկապես անհրաժեշտ է իմանալ թե ո՛վ էր ճիշտ և ո՛վ՝ սխալ: Միլիոնավոր մարդիկ ստիպվեցին իրենց երկիրը լքել... Թուրքիան մինչև այսօր չի կարողացել հիմնել փոքրամասնությունների հետ իր հարաբերությունները ժողովրդավարական հիմունքներով»:[77]

Ուշագրավ է, որ Թուրքիայում արդեն շրջանառվում է այն տեսակետը, որ Հայաստանի նկատմամբ թուրքական քաղաքականությունը տապալվեց, և ոչինչ չտվեց Անկարային: Ըստ ուսումնասիրող Բ. Օրանի՝ անկախության առաջին շրջանում Հայաստանը կանգնած էր երկընտրանքի առջև՝ կամ դուրս գալ տնտեսական ճգնաժամից, կամ վեր հանել ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը: Լևոն Տեր-Պետրոսյանն արեց հնարավորը՝ Թուրքիայի հետ հարաբերությունները բարելավելու համար, սակայն Հայաստանի դեմ պայքարելով Անկարան ոչ միայն չհասավ իր նպատակներին այլև վերջինիս հրեց դեպի Ռուսաստան: Թուրքիայի ԱԳՆ ոչ ճկուն քաղաքականությունը և նեղացկոտությունը փչացրեց թուրք-ֆրանսիական և թուրք-եվրոպական հարաբերությունները, իսկ ԱՄՆ-ում, պայքարելով հայկական լոբբինգի դեմ, թուրքերը մնացին հրեական շահառուների խմբերի պարտքի տակ:[78]

Հայ-թուրքական երկխոսության վերաբերյալ ուշագրավ տեսակետներ են առաջ քաշում նաև հայ գիտնականները: ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Լավրենտի Բարսեղյանը համոզված է, որ հայ-թուրքական հարաբերությունները կարող են կանոնավորվել միայն այն դեպքում, եթե թուրքական կառավարությունը դատապարտի և ճանաչի Հայոց ցեղասպանությունը, փոխզիջումային տարբերակով փոխհատուցի ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդին հասցված նյութական վնասները:[79] Նրա կարծիքով, պետք է հստակեցվեն մեր նպատակներն ու պահանջները Թուրքիայից, բարոյականից դրանք պետք է տեղափոխվեն միջազգային իրավական հարթություն[80], ավելին, «Այսօր երկխոսությունից խուսափել, նշանակում էր պարտվել, հրաժարվել պայքարին: Մի բան, որը չի կարող ներել մեր ժողովուրդը: Ընդհակառակը՝ առիթ էր ներկայանում կրկին անգամ միջազգային հանրությանը ներկայացնել ճշմարտությունը Հայոց ցեղասպանության մասին»:[81] Լ. Բարսեղյանը ճշմարտացիորեն գտնում է, որ երկխոսության արդյունավետությունը շեշտակիորեն կբարձրանա, եթե այդ գործընթացի ղեկը ստանձնեն Հայաստանի և Թուրքիայի պետական մարմինները:

Հարաբերությունների կարգավորման մեկ այլ տեսական մոդել է առաջարկում հայազգի պատմաբան Արմեն Այվազյանը: Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը գնահատելով որպես Հայաստանի Հանրապետության նկատմամբ Թուրքիայի կողմից բացահայտ թշնամանքի ցուցադրություն, Ա. Այվազյանը փորձում է երկկողմ շփումները դիտարկել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության տեսանկյունից: Նրա կարծիքով Անկարայի նկատմամբ Երևանի քաղաքականությունը պիտի կառուցի մի կողմից Թուրքիայի վրա ճնշում գործադրելու, մյուս կողմից թուրքական ճնշմանը հակազդելու սկզբունքների վրա: Ըստ Այվազյանի, «Հայաստանը պիտի միշտ հիշի, սերտի և շարունակի ուսումնասիրել իր հայրենիքի ամբողջա-

նան պատմությունն ու աշխարհագրությունը. ներառյալ՝ Հայոց Եղեռնը. միաժամանակ. սակայն. գիտակցելով. որ իր ուժերից վեր էր հայրենիքի Թուրքիայում մնացած 9/10-րդ հատվածի վերադարձնելը. վերահսկելն ու վերաբնակեցնելը (համենայն դեպս ուժի միջոցով)»:[82]

Ինչ վերաբերում էր Հայոց ցեղասպանության ճանաչման հարցին այն. ըստ Այվազյանի. «պետք էր թողնել թուրքական հասարակության խղճի վրա: Այդ ճանապարհը ավելի արագ կբերի Հայոց ցեղասպանության ճանաչմանը Թուրքիայում. քան բացահայտ ճնշման գործադրումը»:[83]

Ուսումնասիրողի այս կարծիքի հետ դժվար է համաձայնվել. թուրքական պետությունը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ցանկացած փորձ գնահատում է որպես պաշտոնական Անկարայի վրա կատարվող ճնշման փորձ: Այվազյանը չի մատնանշում Հայաստանի նման գործելակերպի դեպքում Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման որևէ հնարավոր շարժառիթ:

Երկխոսության համար անհրաժեշտ պայման է, որ այն ներառի հասարակության հնարավորին լայն խմբեր, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է երկխոսությունը վարել լայն ճակատով: Թուրքագետ Ռուբեն Սաֆրաստյանի կարծիքով. «երկխոսությունը հասարակական տարբեր խմբերի միջև անհրաժեշտ է: Այն հնարավորություն էր տալիս. որ երկու ժողովուրդներն իրարից ավելի չհեռանան և թշնամությունը չավելանա... ի վերջո հարևաններ ենք և պարտավոր ենք գտնել ճանապարհներ (իհարկե պահպանելով մեր մոտեցումները և հասկացողությունները), գտնել եզրեր նորմալ համագործակցելու համար...երկխոսությունները հնարավորություն են տալիս. որպեսզի թուրքական հասարակությունը ծանոթանա մեր խնդիրներին»:[84]

Բրիտանահայ հրապարակախոս Ջորջ Ջերջյանը առաջ է քաշում հայ-թուրքական հաշտեցման սեփական ապագայապաշտական (ֆուտուրոլոգիստական) տեսակետը. համաձայն որի 2015 թվականին թուրքական պետությունը կճանաչի Հայոց ցեղասպանությունը և ներողություն կխնդրի հայ ժողովրդից:[85] Ըստ հեղինակի՝ թուրքական քաղաքական ընտրախավի փոփոխությունը և եվրոպականացմը կբերի նրան. որ Թուրքիայում իշխանության կգան այնպիսի ուժեր. որոնք կթոթափեն Աթաթուրքի ժառանգությունը և թուրքական հասարակությունը կտանեն զարգացման այլ ուղիով:[86] Եվրոպականացող հասարակությունը քաջություն կունենա ընդունելու ու հասկանալու հայկական և քրդական խնդիրները: Արդեն 2015թ. Հայոց ցեղասպանության ճանաչումից հետո կվերանայվեն Կարսի և Մոսկվայի պայմանագրերը և Հայաստանի Հանրապետությանը կվերադարձվի Կասի մարզը՝ դեպի Սև ծով ելքով: Թուրքիան կմուծի նաև փոխհատուցում, և այլն:[87] Հեղինակը. իհարկե խոստովանում է. որ իր տեսակետն ուղակի բարի ցանկություններ շարադրանք է. բայցև հայտարարում. որ այդօրինակ երազանքները. հնարավոր է բացեն հայ-թուրքական երկխոսության դռները:[88]

Հայ-թուրքական հարաբերությունները ժողովուրդների կյանքում հասարակական ցնցումների տեսանկյունից դիտարկող Գ. Խոմզիուրին երկխոսության վերաբերյալ իր ուրույն կարծիքն էր արտահայտում: Վերջինս համոզմունք էր հայտնում. որ հայ- թուրքական թշնամանքին վերջ կդրվի այնժամ. երբ Ստամբուլում կբացվի այն անանուն հայ աղջկա հու-

շարձանը, ով գերադասեց մահը իր ընտանիքի հետ միասին, քան կյանքը՝ առանց նրանց, իսկ Երևանում՝ այն անանուն թուրք աղջնակի հուշարձանը, որը վտանգելով սեփական կյանքը փրկել էր հայերի կյանքեր: «Այդ թշնամանքին վերջ կտրվի այն ժամանակ, երբ թուրք ժողովուրդն անկեղծորեն կզղջա 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի իր կատարած հանցագործությունների համար: Առանց այդ անկեղծ զղջումի թուրք ժողովուրդն ապագա չունի: Այդ թշնամանքին վերջ կտրվի, երբ հայ ժողովուրդը կների զղջացող թուրք ժողովրդին (առանց զղջումի չի կարող լինել ներում)»:[89]

Մեր կարծիքով հայ-թուրքական երկխոսության անհրաժեշտությունը բխում է երկու պետությունների շահերից: Այս երկխոսությունը պիտի լինի առանց թուրքական կողմի առաջ քաշած նախապայմանների:

Նշեցինք՝ որ Թուրքական հասարակությունում ձևավորվել է մտավորականների մի խավ, որը հասկանում է Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտությունը: Պաշտոնական Անկարան ստիպված է պայքարել այդ մտավորականների դեմ հենց իր երկրի ներսում, ասել կուզի, Թուրքիայում ձևավորվել է ժխտման քաղաքականության ներքին ճակատ: Հայկական հարցը կրկին օրախնդիր է դառնում: Եվրամիության անդամության ճանապարհին Թուրքիան ամեն դեպքում բախվելու է Հայոց ցեղասպանության խնդրին: Այսպիսով՝ երկխոսությունն իրական հնարավորություն է թոթափեու անվստահության այդ բեռը, քանզի Հայաստանի նկատմամբ թուրքերի «վախը» գալիս է տեղեկատվական այն վակուումից, որն առկա է երկու պետությունների միջև:

Միմյանց լսելու հնարավորություն է նաև պատմաբանների երկխոսությունը, որի կազմակերպման բազմաթիվ փորձեր են եղել: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ դեռևս 2000թ. ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի ընդլայնված նիստում քննարկվել էր հայ և թուրք պատմաբանների երկխոսության խնդիրը: Եվ չնայած ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը հայտնել էր, որ դեմ չէ պատմաբանների երկխոսությանը, մասնակիցների նշանակալի մասը հնարավոր չէին համարել այդ գաղափարի իրականացումը՝ պնդելով, որ թուրքական կողմը կարող էր այն ավելորդ անգամ շահարկել:[90] 2000 թվականի հունիսի 17-ին, սակայն, Ֆրանսիական Սենատի Մեդիսի սրահում տեղի ունեցավ մտավորականները մեկօրյա հայ-թուրքական երկխոսություն: Համդիպումը, որ անց էր կացվել Ֆրանսիական Սենատի նախագահ Քրիստիան Պոնսլեի բարձր հովանավորության ներքո՝ կազմակերպվել էր Հայկական սփյուռքի հետազոտության կենտրոնի կողմից, որի նախագահն է Ժան Կլոդ Քեբաբջյանը:[91] Բացի այդ՝ Գերմանիայի Մյուլհամ քաղաքում 2001 թվականի մարտի 23-25-ը անց է կացվել հայ-թուրքական երկխոսությանը նվիրված միջոցառում՝ մասնակցությամբ Ռիչարդ Հովհաննիսյանի, Արամ Արքունի, Լորնա Դուրյան Միլլերի, Հակոբ Չաքրյանի, Թաներ Աքչամի, Հալիլ Բերքթայի, Ֆիքրեթ Ադանըրի և այլոց: Եղել են պատմաբանների երկխոսության փորձեր նաև՝ 2000թ. հուլիսին՝ Փարիզում, հայ-թուրքական երեք գիտաժողովներ՝ ԱՄՆ-ում (Չիկագո՝ 2000թ., Միչիգանի համալսարան՝ 2002թ., Մինեապոլիսի համալսարան՝ 2003թ.), Գերմանիայում (Մյուլհամում՝ 2001թ), Դանիայում՝ 2003թ. և այլն: Հայ-թուրքական երկխոսության հետաքրքիր նախաձեռնություններից է նաև Վիեննայի համալսարանի բանավեճի հրավերը հայ և թուրք գիտնականներին:

Պատմաբանների երկխոսությունը, սակայն, չպետք է դառնա պատմությունը պատմաբաններին թողնելու թուրքական քաղաքականության օժանդակելու միջոց: Կարծում ենք՝ անիմաստ է երկխոսությունն այն պատմաբանների հետ, որոնք կասկածի տակ են դնում Հայոց ցեղասպանության եղելությունն՝ ընդհանրապես: Երկխոսությունը ոչ թե պիտի քննարկի Հայոց ցեղասպանության լինել-չլինելու հարցը, այլ դրա հետևանքները ու այդ հետևանքների վերացման հարցը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Թուրքական ժխտման մասին մասնավորապես տե՛ս Dadrian Vahakn. The Key Elements in the Turkish Denail of the Armenian Genocide: A Case Study of Distortion and Falsification, Ontario 1999, Танер Акчам. Турецкое национальное Я и Армянский Вопрос, Москва, 1995: Smith Roger. Denail of the Armenian Genocide, Genocide A Critical Bibliographic Review, Vol 2, London, New York, pp. 63-85, Smith Roger. Eric Markusen, Robert Jay Lifton, Professional Ethics and the Denail of Armenian Genocide: Holocaust and Genocide Studies, 9(1),1-22: Անանյան Արամ. Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական քաղաքականությունը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Երևան, «Գարուն» 11, 2002. էջ 10-15:

[2] Տե՛ս, օրինակ, «Հայաստանի Հանրապետություն», 28.11.1990:

[3] Նույն տեղում:

[4] Kramer Heinz. Will Central Asia Become Turkey's sphere of influence, Perceptions: Journal of International Affairs, March- May, 1996 (Internet version).

[5] Չաքրյան Հակոբ. Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում. Երևան 1998. էջ 11:

[6] Տե՛ս SAM Paper No. 1/96, Seminar on Russia and the NIS, 29-31 March 1996, Antalya, Turkey, http://www.mfa.gov.tr/grupa/sam/1.96/1-3.htm#ARMENIA

[7] Չաքրյան Հակոբ . Ղարաբաղյան հիմնահարցը.., էջ 10-11:

[8] "Milliyet", 05.12.1990.

[9] «Ազգ». 30.05.2002:

[10] Սաֆրաստյան Ռ. «Հնարավոր չէ 21-րդ դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև...», Երևան. 2003. էջ 39:

[11] Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի (այսուհետ՝ ՀՑԹԻ) ֆոնդ. բաժին 32, թպ. 26. փ. 5, էջ 4:

[12] Çeviköz U. Uluslararası İlişkileri yeni dengel, Ermenistan Özel Sayisi, TESEV, Agustos, 2001, s. 11:

[13] Kamer Kasım. Uluslar Arası Ilişkiler Boyutuyla Ermeni Sorunu: Bilim ve Aklın Aydınlığında Eğitim Dergisi: Nisan 2003, YIL, 4, SAYI: 38, ինչպես նաև U. Çeviköz, նույն տեղում. էջ 11:

[14] «Առավոտ». 21.10.2000:

[15] Nagorno Karabakh Conflict: Some Facts, Geneve, 1995. էջ 6. տե՛ս նաև Չաքրյան Հակոբ. «Թուրքիան Հայաստանի հետ երկխոսություն չի ցանկանում. այլ ցեղասպանության բանաձևերը չեզոքացնելու համար դա շահարկում է». Օրեր. թիվ 1-4. 2001. էջ 17-19, Այվազյան Արսեն. Ղարաբաղյան Հակամարտության կարգավորումը և Հայաստանի Ռազմավարական Անվտանգությունը. Երևան, 1998. էջ 21-37 :

[16] Տե՛ս Reuter 4.5.1993, UPI 4.5.93, 4.7.93, Agence France Press, 4.3.93, 4.6.93, 4.9.93, 4.15.93, Anadolu Ajansi 4.3.93, 4.5.93 և այլն:

[17] Տե՛ս The Military Balance, 1995-1996, London, ինչպես նաև Մելքոնյան Մ. Թուրքիայի զինված ուժերի օպերատիվ և մարտական պատրաստությունը, Հայկական բանակ 2, 1996թ.:
[18] «Հայկական Ժամանակ». 18.09.2002:
[19] ՀՅԹԻ ֆոնդ. բաժին 32. թղ. 26. փ. 3. էջ 1:
[20] N. Pope & H. Pope. Turkey Unveiled, New York 1997, p. 292.
[21] ՀՅԹԻ ֆոնդ. բաժին 32. թղ. 26. փ. 5. էջ 3:
[22] Նույն տեղում. էջ 3:
[23] Куртов А. А., Халмухамедов А. М. Армения-Турция: Противостояние или Сотрудничество? "Армения: Проблемы независмого развития", Москва, 1998, стр. 455.
[24] «Հայկական Ժամանակ», 18.07.2002:
[25] "Республика Армения", 22.04.1995.
[26] «Հայաստանի Հանրապետություն», 15.09.1996:
[27] Տե՛ս, օրինակ, "Turkish Daily News", 31.10.1997:
[28] «Առավոտ». 11.10.2000:
[29] Այս մասին ավելի հանգամանալի տե՛ս Çeviköz U., նշվ. աշխ., էջ 13:
[30] http://news.president.am/arm/?sub=statements&year=1998&mode=1.
[31] Նախագահի Համացանցի էջ www.president.am:
[32] Ի մասնավորի տե՛ս http://news.president.am/arm/?sub=statements&id=93&from=0&year=2002:
[33] Նախագահ Ռ. Քոչարյանի ելույթն Արգենտինայի միջազգային հարաբերությունների խորհրդում, 06/05/2002: http://news.president.am/arm/?sub=statements:
[34] Նախագահ Ռ. Քոչարյանի հարցազրույցը CNN-Türk հեռուստաընկերությանը, 29/01/2001: http://news.president.am/arm/?sub=press&year=2001&id=1&mode=1:
[35] Նույն տեղում:
[36] Նախագահ Ռ. Քոչարյանի հարցազրույցը CNN-Türk հեռուստաընկերությանը, 29/01/2001: http://news.president.am/arm/?sub=press&year=2001&id=1&mode=1:
[37] Այս մասին ավելի հանգամանալի տե՛ս Բարսեղյան Լ. «Ամերիկայի Միացյալ Նահանգները. Հայոց ցեղասպանությունը և թուրքական հակազդեցությունը». Երևան, 2001:
[38] Նույն տեղում. էջ 64:
[39] Նույն տեղում, էջ 65:
[40] "Cumhuriyet", 25.02.1995, տե՛ս նաև Չաքրյան Հ., նշվ. աշխ., էջ 38:
[41] Նույն տեղում. էջ 38:
[42] "Turkish Daily News", 12.07.2001.
[43] Ամերիկյան քաղաքականության մասին ավելի հանգամանալի տե՛ս.. Бзежинский З. Великая шахматная доска, М., 1999, стр. 149-155.
[44] «Մեղիամաքս». 5.08.2003:
[45] "RFE/RL News line," 15 and 18 July 2003.
[46] Կազմակերպության մասին ավելի հանգամանալի տե՛ս. http://www.tabdc.org:
[47] Կազմակերպության պաշտոնական համացանցային կայքի բացման մասին հայտարարվել է 2004թ. հունվարի 12-14 ԹՀՀՀ-ի Լոնդոնում կայացած հանդիպման ժամանակ: Տե՛ս http://www.tarc.info:
[48] TABDC activity Report 1997- Present, www.tabdc.org.
[49] Նույն տեղում:
[50] Նույն տեղում:
[51] "Noyan Tapan News line", 13.02.1998, http://www.nt.am.
[52] "Turkish Probe", Dec., 1999.
[53] TABDC activity Report 1997- Present, www.tabdc.org.
[54] "AIM", 10 March, 2001.
[55] Çeviköz U., նշվ. աշխ., էջ 14:

[56] «Ազգ». 21.07.2001:
[57] «Արմենպրես». 28.05.2002, http://www.armenpress.am:
[58] «Ազգ». 1.6.2002:
[59] «Ազգ». 5.6.2002:
[60] ՀՅԹԻ, ֆոնդ 32, թուղթ 44, ծր. 1:
[61] «Ազգ». 5.6.2002:
[62] Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի աշխատանքներին անդրադարձել ենք հետևյալ աշխատությունում: Անանյան Արամ. Հայ-թուրքական երկխոսության ներ փորձ (Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեության մասին), Երևան, 2003:
[63] Yeni Binyıl, 1.10.2000.
[64] «Ազգ», 2.08.2001:
[65] Ավելի հանգամանալի տե՛ս. Taner Akçam. Dialogue Across an International Divide: Essays Towards a Turkish-Armenian Dialogue, Zoryan Institute, 2001, էջ 1:
[66] Նույն տեղում. էջ 19:
[67] Նույն տեղում. էջ 29:
[68] Նույն տեղում. էջ 31:
[69] Նույն տեղում. էջ 39:
[70] ՀՅԹԻ ֆոնդ. բաժին 32. թպ. 26. փ. 1. էջ 3:
[71] Նույն տեղում:
[72] Նույն տեղում. էջ 4:
[73] Նույն տեղում:
[74] Պողոսյան Ս. Կ., Պողոսյան Կ.Ս., նշվ. աշխ., էջ 7:
[75] ՀՅԹԻ ֆոնդ. բաժին 32. թպ. 26. փ. 6. էջ 3:
[76] Նույն տեղում. էջ 3:
[77] ՀՅԹԻ ֆոնդ. բաժին 32. թպ. 26. փ. 4. էջ 2:
[78] "Agos", 28.06.2002.
[79] Բարսեղյան Լ. «Հայ-թուրքական հաշտության հանձնախմբի» ստեղծման կապակցությամբ հայ պատմաբանների և հանրության դիրքորոշման մասին: Զեկուցում կարդացված 2001թ, հուլիսի 21-ին Հայոց ցեղասպանության թանգարան- ինստիտուտի գիտական խորհրդի ընդլայնված նիստում. էջ 12:
[80] Նույն տեղում. էջ 12:
[81] Բարսեղյան Լ. «Ամերիկայի Միացյալ Նահանգները. Հայոց ցեղասպանությունը և թուրքական հակազդեցությունը». Երևան, 2001. էջ 83-84:
[82] Այվազյան Արմեն. նշվ. աշխ.. էջ 78:
[83] Նույն տեղում. էջ 78:
[84] Սաֆրաստյան Ռուբեն. Հնարավոր չէ 21-րդ դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև.... Երևան, 2003. էջ 43:
[85] Jerjian George. The Truth Will Set Us Free: Armenians and Turks Reconciled: London, 2003, p. 71:
[86] Նույն տեղում. էջ 70
[87] Jerjian George . նշվ. աշխ., էջ 74
[88] Նույն տեղում. էջ 90:
[89] Хомизури Г. Социальные потрясения в судьбах народов, Москва, 1997, стр. 285:
[90] ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի ընդլայնված նիստի արձանագրություն 2, 21.09.2000:
[91] «Հայաստանի Հանրապետություն», 20.06.2000:

Резюме

Геноцид армян в контексте вопроса армяно-турецкого диалога.

Арам Ананян

Реалии современной международной жизни диктуют свои унифицированные правила всем действующим лицам международной политики. Одним из этих принципов является развитие дружественных добрососедских отношений между государствами. Но эта установка неприменима к армяно-турецким отношениям: два государства даже сегодня "благодаря" жесткой политике Анкары не пошли дальше мертвой точки. Главным камнем преткновения нормализации двухсторонних отношений по сей день остается турецкая политика отрицания геноцида армян. И даже после того, как первая политическая элита Республики Армения оставила вопрос международного признания этого преступления за чертой внешнеполитической повестки. Анкара не только не ослабила свою позицию, но и стала требовать односторонних уступок от Еревана. Отсутствие официальных двухсторонних отношений оставила эту сферу деятельности общественной дипломатии и были выработаны разные модели диалога. Следует отметить также, что армяно-турецкие отношения находятся в центре внимания супердержав.

Статья также рассматривает широкий круг проблем двухсторонних отношений в контексте геноцида армян. Представляется видение будущего диалога с Турцией.

Summary

The Armenian Genocide in the Context of Armenian-Turkish Dialogue.

Aram Ananyan

The realities of the contemporary international relations dictate unified rules for all countries to have amicable relations with their neighbors. But even this reality is not applicable for the Armenian- Turkish relations, which, even under the light of the mentioned universal axiom remain unresolved. Armenia and Turkey are two independent states, which due to the "hard-bargain" position of Ankara do not have an established system of official bilateral relations. The main issue, that leaves the those relations beyond the trashhold of normalization is the issue of the Turlish denial of the Armenian Genocide. Though, the first political elite of the independent Armenia declared its moderate attitude towards Turkey (it left Armenian Genocide recognition out of the foreign political priorities), officials in Ankara, on their behalf, adopted a firm position towards Yerevan. At the present Ankara demands unilateral concessions from Armenia. As there are no official relations a wide room is left for the public diplomacy. Some theoretical models for mutual understanding had been worked out for that time. It is worth mentioning, that relations between Armenia and Turkey are an issue of keen geopolitical concern for the regional and global superpowers.

The article studies a wide range of the bilateral issues in the context of the Armenian Genocide and represents a vision for the future dialogue with Turkey.